03
ՕԳՈՍՏՈՍ
2023

Luys Լույս®

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿՏՐՈՒԿ ԱՃԸ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԾԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿՏՐՈՒԿ ԱՃԸ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԾԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ 11

ԱՄՓՈՓՈՒՄ 18

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄԷ	Արաբական Միացյալ Էմիրություններ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՏԳ ԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԳՏԴ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձր և կայուն տնտեսական աճի կարևորագույն նախապայմաններից են միջազգային շուկաներում երկրի տնտեսության մրցունակությունը և արտահանումը խթանող պայմանների ու միջավայրի առկայությունը: Այս իմաստով, պետության կարևորագույն անելիքներից է դրանց նպաստելու ուղղությամբ գործուն քայլերի իրականացումը: Բարենպաստ գործարար միջավայրի և արտահանումը խթանող պայմանների ապահովման դրույթը, որպես տնտեսական քաղաքականության կարևոր նպատակ, ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագրում:

2022թ. ապրիլից արձանագրվում է արտաքին առևտրաշրջանառության, այդ թվում՝ արտահանման ծավալների աննախադեպ բարձր աճ, որը, սակայն, հնարավոր չէ բացատրել բացառապես ՀՀ արտահանման ներուժի աճով: Առավել ևս, որ 2022 թվականին հիմնական «արտահանելի» ոլորտներից արդյունաբերությունում գրանցվել է արձանագրված 12.6% տնտեսական աճից էապես ցածր աճ՝ 6.0%, իսկ գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է անկում՝ 0.7%-ի չափով:

Հայտնի է, որ 2022թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով մարդկանց և կապիտալի մեծ ներհոսքով, ինչպես նաև ՌԴ նկատմամբ արևմտյան պատժամիջոցների կիրառումով: Ուշագրավ է, որ **արտահանման կազմում զգալի աճ արձանագրած ապրանքախմբերի թվում են այնպիսիները, որոնց արտադրությունը Հայաստանում կա՛մ ընդհանրապես բացակայում է, կա՛մ մի քանի անգամ զիջում է դրանց արտահանման ծավալներին:** Բացի այդ, **որոշ ապրանքախմբերի գծով նշանակալի աճ է արձանագրվել թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կառուցվածքում: Այս հանգամանքները, ըստ էության, կարելի է դիտարկել որպես մեծ ծավալներով վերարտահանման մասին փաստարկ:**

Ավելին, դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտահանումն աճել է՝ չնայած այն հանգամանքին, որ **ՀՀ ՀՆԱ-ում շարունակաբար աճում է տնտեսության «ոչ արտահանելի» և նվազում «արտահանելի» հատվածների տեսակարար կշիռը:** ՀՀ տնտեսության արտահանման կազմում ավանդաբար նշանակալի դերակատարում ունեցած գործունեության մի քանի ոլորտների արտադրանքի արտահանման աճի տեմպերը վերջին շրջանում անհամեմատ ավելի համեստ են:

Հատկանշական է նաև, որ դիտարկվող ժամանակահատվածում ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով մարդկանց և կապիտալի մեծ ներհոսքի պատճառով զգալիորեն արժևորվել է ՀՀ դրամը, ինչը նվազեցրել է միջազգային շուկաներում ՀՀ մրցունակությունը, զսպել արտահանումը և նպաստել ներմուծման աճին:

Այնուամենայնիվ, չնայած 2022 թվականին առկա են եղել մի շարք հանգամանքներ, որոնց ազդեցությունը ՀՀ տնտեսության արտահանման վրա բացասական է, արձանագրվել է արտահանման ծավալի աճի աննախադեպ բարձր տեմպ: Այսինքն՝ ակնհայտ է, որ առկա են եղել շոկային գործոններ, որոնց դրական ազդեցությունը էապես գերազանցել է մյուս գործոնների բացասական ազդեցությանը:

Սույն հետազոտությունը նվիրված է ՀՀ տնտեսության արտահանման կառուցվածքի ուսումնասիրությանը, դիտարկվող ժամանակահատվածում արտահանման աճի պատճառ հանդիսացող հիմնական գործոնների վերհանմանը, ինչպես նաև, այդ գործոնների բացակայության պայմաններում ՀՀ-ում տնտեսական աճի հնարավորություններին: Այդ նպատակով նախ իրականացվել է ՀՀ արտաքին առևտրի ներկա իրավիճակի և զարգացման դինամիկայի վերլուծություն, նշվել են վերջին տարիներին տեղի ունեցած առավել էական փոփոխությունները և արտաքին առևտրի աճի վրա դրանց հավանական ազդեցությունները: Այնուհետև, մոտավորապես գնահատվել է ՀՀ տնտեսության արտահանման մեջ վերարտահանման ծավալը՝ հաշվի առնելով արտածին դրական գործոնները: Առանձնացվել են արտահանման վրա ազդող հիմնական գործոնները, և ներկայացվել է արտածին դրական շոկերի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա:

1. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

2022թ. ապրիլից արձանագրվում է արտաքին առևտրաշրջանառության, այդ թվում՝ արտահանման ծավալների բարձր աճ: Մասնավորապես, 2022 թվականին արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 14,195.0 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ աճելով 69.4%-ով), որից՝ արտահանմանը՝ 5,419.1 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ աճը՝ 79.7%), իսկ ներմուծմանը՝ 8,775.9 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 63.7%)[1]: 2023 թվականի հունվար-մարտ ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի տպավորիչ է. արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 105.8, արտահանումը՝ 120.4, իսկ

[1] Այս պարբերությունում նշված տվյալները վերցված են ՀՀ ՝ ՎԿ պաշտոնական կայքից՝ www.armstat.am, այցելվել է 28.07.2023թ.:

ներմուծումը՝ 97.8%-ով: Անժխտելի է, որ արտաքին առևտրաշրջանառության աճի բարձր տեմպն առավելապես պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտությամբ, մասնավորապես, ՌԴ նկատմամբ արևմտյան պատժամիջոցների կիրառմամբ: Հիշյալ գործոնների դրական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա հիմնականում դրսևորվել է 2022-ի երկրորդ եռամսյակից սկսած: Քանի որ 2023թ. առաջին երեք ամիսների ցուցանիշները համեմատվում են նախորդ տարվա նույն ամիսների հետ, երբ արտաքին դրական շոկը դեռևս տեղի չէր ունեցել, անհիմն է այդ ամիսների բարձր աճի ցուցանիշները (հիմնականում բազայի էֆեկտի հաշվին) որպես 2023-ին ևս «աննախադեպ» աճի փաստարկ օգտագործելը: Պատահական չէ, որ համաձայն պաշտոնական վիճակագրության՝ արդեն 2023 թվականի ապրիլ-մայիս ամիսների թե՛ կուտակային և թե՛ 12-ամսյա ցուցանիշները, ճիշտ է, գերազանցում են 2022-ի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշներին, սակայն դրանց աճը գնալով դանդաղել է, **իսկ հունիսին արձանագրվել է արտահանման աճի տեմպի՝ նախորդ ամիսների բարձր աճերի ֆոնին գրեթե զրոյական (2.5%,) ցուցանիշ, որը 2021թ. հոկտեմբերից ի վեր ամենացածր ցուցանիշն է**: Հունվար-հունիս ամիսների արտահանման կուտակային աճը ևս դանդաղել է՝ կազմելով 72.8%:

2018-2022 թվականներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և իրական ՀՆԱ-ի հավելաճի տեմպերը ներկայացված են Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. ՀՀ արտահանման, ներմուծման և իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը 2018-2022թթ., %[2]



Գծապատկերից երևում է, որ 2022 թվականին կտրուկ աճել են թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ծավալները: Հարկ է նշել, որ վերջին երեք տարիները արտաքին առևտրաշրջանառության զարգացման միտումներն ուսումնասիրելու առումով այնքան էլ «հարմար» տարիներ չեն: Մասնավորապես,

[2] Աղբյուրը՝ ՎԿ տվյալներ:

2020 թվականը առանձնանում է երկու լրջագույն բացասական շոկերով՝ կորոնավիրուսային համավարակով և 44-օրյա պատերազմով (որոնց հետևանքով տնտեսական անկումը կազմել էր 7.2%): Իսկ 2021-ը հետճգնաժամային վերականգնման տարի էր. բացի այն, որ ՀՀ տնտեսությունը 2020-ի անկումից հետո դեռևս չէր վերականգնվել, արտաքին առևտրի առումով ևս կային լուրջ խնդիրներ՝ համավարակի պատճառով մեր հիմնական գործընկեր երկրներում նույնպես արձանագրվել էր աճի տեմպերի էական նվազում (երկրների մեծ մասում՝ պարզապես տնտեսական անկում), վատթարացել էր տրանսպորտային-լոգիստիկ իրավիճակը և այլն: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ պարագայում, 2021 թվականին ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների աճի տեմպերը մի քանի անգամ գերազանցել են իրական ՀՆԱ-ի աճի տեմպին: Հիմնական պատճառն այն է, որ 2021-ին գործել է «բազայի էֆեկտը»՝ 2021-ի ցուցանիշները համեմատվում են 2020-ի նվազած ցուցանիշների հետ: 2022 թվականին, ընդհակառակը, արձանագրվել է ուժեղ դրական շոկ՝ կապված ռուս-ուկրաինական զինված հակամարտության հետևանքով դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի մեծ ներհոսքի և ՌԴ նկատմամբ արևմտյան պատժամիջոցների կիրառման հետ: Արդյունքում, 2021-ի համեմատ մի քանի անգամ արագացել է թե՛ արտահանման, թե՛ ներմուծման աճը:

Արտահանման աճի վրա ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված դրական շոկի ազդեցության վճռորոշ լինելը հիմնավորելու համար 2023 թվականի առաջին եռամսյակը համեմատվել է 2022-ի առաջին եռամսյակի հետ (2022-ի առաջին եռամսյակում այդ շոկը դեռևս գրեթե չէր ազդել), 2022-ի առաջին եռամսյակը՝ 2021-ի առաջին եռամսյակի հետ, իսկ 2022-ի երկրորդից չորրորդ եռամսյակները 2021-ի նույն ժամանակահատվածի հետ (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՀՀ արտահանման ծավալները 2021-2023թթ. առանձին ժամանակահատվածներում, մլն ԱՄՆ դոլար[3]



Գծապատկերից երևում է, որ **արտահանման ծավալների կտրուկ աճն ամբողջությամբ համընկնում է ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված դրական շոկի ազդեցության ժամանակահատվածի հետ:**

Միանշանակ է, որ անհրաժեշտ է առանձնացնել արտաքին առևտրաշրջանառության աճին առավելապես նպաստած ապրանքախմբերը, վերհանել դրանց աճի հիմնական պատճառներն ու հնարավոր հետևանքները:

Աղյուսակ 1-ում ներկայացված է 2021-2022 թվականներին ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքը՝ ըստ ապրանքային բաժինների:

[3] Աղբյուրը՝ ՎԿ տվյալներ:

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքը 2021-2022 թվականներին, հազ. ԱՄՆ դոլար[4]

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ				ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			
	2021թ.	2022թ.	Հավելաճը, %	Նպաստումն աճին, *տոկոսային կետ*	2021թ.	2022թ.	աճի տեմպը, %	Նպաստումն աճին, *տոկոսային կետ*
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	**3,015,987.2**	**5,360,069.4**	**77.7**	**77.7**	**5,362,209.0**	**8,768,658.9**	**63.5**	**63.5**
այդ թվում՝								
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	107,049.1	171,597.6	60.3	2.1	167,028.6	260,326.5	55.9	1.7
բուսական ծագման արտադրանք	186,806.6	225,389.6	20.7	1.3	290,453.3	421,330.9	45.1	2.4
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	78.5	7,516.5	9,475.2	0.2	72,432.6	105,556.1	45.7	0.6
պատրաստի սննդի արտադրանք	624,888.4	877,177.7	40.4	8.4	434,706.4	579,428.0	33.3	2.7
հանքահումքային արտադրանք	982,218.1	1,022,039.0	4.1	1.3	937,657.7	1,196,036.5	27.6	4.8
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	41,423.2	82,780.6	99.8	1.4	455,902.9	586,792.6	28.7	2.4
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	19,792.9	62,483.5	215.7	1.4	234,614.7	326,747.3	39.3	1.7
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	5,878.9	11,116.6	89.1	0.2	24,210.9	28,432.6	17.4	0.1
փայտ և փայտյա իրեր	1,119.8	4,725.4	322.0	0.1	72,316.5	93,191.4	28.9	0.4
թուղթ և թղթից իրեր	1,692.8	6,740.2	298.2	0.2	87,544.9	137,369.1	56.9	0.9
մանածագործական իրեր	183,548.0	212,446.3	15.7	1.0	301,609.4	396,209.3	31.4	1.8
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	4,705.7	12,605.0	167.9	0.3	59,901.3	76,598.4	27.9	0.3
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	20,272.2	37,068.3	82.9	0.6	109,364.4	160,576.6	46.8	1.0
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	326,341.7	989,329.8	203.2	22.0	248,472.5	690,777.1	178.0	8.2
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	364,457.2	459,776.1	26.2	3.2	391,150.2	624,353.5	59.6	4.3
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	56,708.3	695,464.4	1,126.4	21.2	899,164.3	1,721,708.4	91.5	15.3
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	38,706.5	321,746.4	731.2	9.4	306,319.5	965,978.4	215.3	12.3
սարքեր և ապարատներ	36,056.8	116,611.9	223.4	2.7	123,392.3	196,872.5	59.6	1.4
տարբեր արդյունաբերական ապրանքներ	13,254.5	40,121.9	202.7	0.9	145,694.3	191,045.2	31.1	0.8
արվեստի ստեղծագործություններ	988.0	3,332.7	237.3	0.1	272.2	9,328.4	3,327.0	0.2

Աղյուսակից երևում է, որ 2022 թվականին արտահանման աճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքախմբերի եռյակը՝ համապատասխանաբար 22.0, 21.2, և 9.4 տոկոսային կետով, կազմում են *«թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»*, *«մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»* և *«վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»* ապրանքախմբերը: Ներմուծման աճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքախմբերի եռյակը ևս նույնն է՝ *«մեքենաներ, սարքավորումներ և*

[4] Աղբյուրը՝ ՎԿ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին» հրապարակում՝ https://armstat.am/am/?nid=82&id=2547, այցելվել է 27.07.2023թ.:

Նշված փաստաթղթի հրապարակումից հետո ՎԿ-ն վերանայել է ՀՀ արտաքին առևտրի տվյալները, որի արդյունքում, ՎԿ կայքում 28.07.2023թ. ներկայացված տեղեկատվության համաձայն, արտահանման ընդհանուր ծավալն աճել է 59.0, իսկ ներմուծմանը՝ 7.2 մլն ԱՄՆ դոլարով: Այնուամենայնիվ, քանի որ հիշյալ վերանայումից հետո արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքի նոր տարբերակ չի հրապարակվել, աղյուսակում օգտագործված են չվերանայված տվյալները:

Տվյալները ներկայացված են համաձայն «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի» (ԱՏԳ ԱԱ):

Բոլոր նպաստումները (այստեղ և հաջորդիվ ներկայացված) հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՎԿ պաշտոնական տվյալների հիման վրա:

մեխանիզմներ» (15.3 տոկոսային կետ), *«վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»* (12.3 տոկոսային կետ) և *«թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»* (8.2 տոկոսային կետ): Աչքի է զարնում նաև այն հանգամանքը, որ այդ ապրանքախմբերի գծով 2022 թվականին նշանակալի աճ է արձանագրվել թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կառուցվածքում: Մասնավորապես՝ *«վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»*[5] ապրանքախմբի գծով արտահանումն աճել է ավելի քան 8.3 անգամ (283.0 մլն ԱՄՆ դոլարով), իսկ ներմուծումը՝ 3.2 անգամ (659.7 մլն ԱՄՆ դոլարով): *«Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»* ապրանքախմբի գծով արտահանումը 12.3 անգամ (638.8 մլն ԱՄՆ դոլարով) է աճել, իսկ ներմուծումը՝ 1.9 անգամ (822.5 մլն ԱՄՆ դոլարով): *«Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»* ապրանքախմբի գծով արձանագրվել է արտահանման եռակի (663.0 մլն ԱՄՆ դոլարով), իսկ ներմուծման՝ 2.8 անգամ (442.3 մլն ԱՄՆ դոլարով) աճ:

Ուշագրավ է, որ թե՛ 2019 և թե՛ 2021 թվականներին (2020 թվականը չի դիտարկվել, քանի որ այն անկումային է եղել ինչպես տնտեսական աճի, այնպես էլ արտահանման և ներմուծման առումով) արտահանմանը մեծ չափով նպաստած ապրանքախմբերից 2022-ի արտահանմանը նպաստածների թվում է միայն *«թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»* ապրանքախումբը: Մինչդեռ, 2022-ի արտահանման աճի մեջ *«հանքահումքային արտադրանք»* (նպաստումը 2019-ի արտահանման 9.7%[6] աճին՝ 3.4 տոկոսային կետ, 2021-ի 18.9% աճին՝ 6.6 տոկոսային կետ) և *«պատրաստի սննդի արտադրանք»* (նպաստումը 2019-ի արտահանման 9.7% աճին՝ 3.7 տոկոսային կետ) ապրանքախմբերի դերակատարությունը շոշափելիորեն նվազել է. դրանք 2022թ. արտահանման 77.7% աճին նպաստել են ընդամենը համապատասխանաբար՝ 1.3 և 8.4 տոկոսային կետով:

2022 թվականին զգալիորեն փոխվել են նաև արտաքին առևտրաշրջանառության առումով ՀՀ հիմնական առևտրային գործընկեր երկրների ցանկը և առևտրաշրջանառության տեսակարար կշիռները (Գծապատկեր 3):

[5] Որոշ հաշվետվություններում օգտագործվում է «Փոխադրամիջոցներ» անվանումը:
[6] Աճերի վերաբերյալ այս պարբերությունում նշված տվյալները վերցված են ՎԿ պաշտոնական կայքից:

Գծապատկեր 3. ՀՀ հիմնական առևտրային գործընկեր երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռները 2021-2022 թվականներին (%)[7]



Գծապատկերից երևում է, որ 2021 թվականին թե՛ արտահանման և թե՛ ներմուծման առումով ՀՀ ամենախոշոր գործընկերների հնգյակը գլխավորում է ՌԴ-ն (համապատասխանաբար՝ արտահանման ընդհանուր ծավալի 27.9 և ներմուծման ընդհանուր ծավալի 37.3%-ով)[8]: ՌԴ-ն այդ հնգյակներում առաջատարի դիրքերը պահպանել է նաև 2022 թվականին: Ընդ որում, դեպի ՌԴ արտահանման տեսակարար կշիռը մեկ տարվա ընթացքում աճել է զգալիորեն՝ 17.1 տոկոսային կետով, 2022-ի արդյունքներով կազմելով 45.0% (դեպի ՌԴ արտահանման ծավալը 2022-ին 2021-ի համեմատ աճել է 186.8%-ով կամ 1,570.3 մլն ԱՄՆ դոլարով):

ՀՀ արտահանման մեջ ՌԴ մասնաբաժնի այդպիսի կտրուկ աճը ՀՀ տնտեսության (մասնավորապես՝ արտահանողների) համար պարունակում է էական ռիսկեր՝ հատկապես, նկատի ունենալով ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ ֆինանսական համակարգի հետագա զարգացումների

[7] Աղբյուրը՝ ՎԿ տվյալներ:
[8] Այս պարբերությունում նշված տվյալները վերցված են ՎԿ պաշտոնական կայքից:

առումով առկա մեծ անորոշությունը: **Արտահանման առումով առաջատար առևտրային գործընկեր ՌԴ արտահանման տեսակարար կշռի կտրուկ աճը մտահոգիչ է, քանի որ դա, ըստ էության, նվազեցրել է արտահանման առումով ՀՀ դիվերսիֆիկացվածության աստիճանը, իսկ դա նշանակում է, որ ավելացել է ռուսական շուկայից ՀՀ արտահանողների կախվածությունը:**

Փոխարենը, ՌԴ-ից ներմուծման տեսակարար կշիռը նվազել է մինչև 32.8%, չնայած այն բանին, որ 2022-ին այդ երկրից ներմուծման ծավալը ևս 2021-ի համեմատ աճել է՝ 43.9%-ով կամ 877.3 մլն ԱՄՆ դոլարով:

Արտահանման հնգյակի կազմը մեկ տարվա ընթացքում փոխվել է՝ դրանում 2022-ին հայտնվել են երկու նոր երկրներ: Մասնավորապես, ԱՄԷ-ն արտահանման 534.1 մլն ԱՄՆ դոլար ցուցանիշով (արտահանման կառուցվածքում 10.0% մասնաբաժնով) դարձել է արտահանման առումով ՀՀ երկրորդ ամենախոշոր գործընկերը: Հնգյակի «նորեկ» է նաև Իրաքը՝ 4.7% մասնաբաժնով: 2021-ի համեմատ հնգյակը լքել են Բուլղարիան և Նիդեռլանդները: Ներմուծման հնգյակում 2021-ին երկրորդ հորիզոնականը (10.3% մասնաբաժնով) զբաղեցնող Չինաստանը 2022-ին իր տեղը զիջել է 2021-ին չորրորդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանին: 2021-ի համեմատ մեկ հորիզոնականով նահանջել է նաև հնգյակում երրորդը հանդիսացած Իրանը:

Ուշագրավ է, որ ներմուծման հնգյակում մասնաբաժնի նվազում ունեցած բոլոր երկրներից ներմուծման ծավալները բացարձակ մեծությամբ աճել են: Արտահանման հնգյակում այս երևույթն առկա չէ միայն Շվեյցարիայի դեպքում (դեպի այս երկիր արտահանումը 2021-ի համեմատ նվազել է 29.2%-ով կամ 104.9 մլն ԱՄՆ դոլարով[9]): Այսինքն՝ մնացած բոլոր երկրների մասնաբաժնի նվազումը պարզապես հետևանք է այն բանի, որ այլ երկրների աճն ավելի մեծ է եղել: Դեպի Շվեյցարիա և Բուլղարիա արտահանման ճնշող մեծամասնությունը կազմում է հանքանյութի արտահանումը: Դեպի Շվեյցարիա հանքանյութի արտահանման նվազումը ՀՀ արտահանման մեջ այդ երկրի մասնաբաժնի ավելի քան 2.5 անգամ կրճատման հիմնական պատճառներից մեկն է: Բուլղարիայի դեպքում՝ չնայած 2021 թվականի համեմատ 2022-ին դեպի այդ երկիր հանքանյութի արտահանման աճին, ՀՀ արտահանման մեջ այդ երկրի մասնաբաժինը նվազել է (2021-ի 6.6%-ի դիմաց 2022-ին՝ 3.9%), և այն դուրս է մնացել արտահանման առումով ամենախոշոր գործընկերների հնգյակից:

[9] Այս պարբերությունում նշված տվյալները վերցված են ՊԵԿ պաշտոնական կայքից՝ https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIExportStatistics, այցելվել է 27.07.2023թ.:

2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Այս բաժնի նպատակն է վերհանել 2022 թվականին արտահանման աճի հիմնական գործոնները, առանձնացնել արտահանման աճին առավել չափով նպաստած ապրանքախմբերը, ուսումնասիրել դրանց դինամիկան վերջին տարիների ընթացքում, պարզել, թե որքանով է արտահանման աճը պայմանավորված ՀՀ տնտեսության արտահանման ներուժի աճով:

Նախ առանձնացվել են այն ապրանքախմբերը, որոնց արտահանման ծավալը 2022 թվականին նախորդ տարիների համեմատ էականորեն աճել է: Այդ ապրանքախմբերի արտահանման ծավալների 2018-2022 թվականների դինամիկան ներկայացված է Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Որոշ ապրանքախմբերի արտահանման ծավալները 2018-2022թթ., մլն ԱՄՆ դոլար[10]



2022 թվականի արտահանման ընդհանուր ծավալի գրեթե 2/3-ը կազմում է հինգ ապրանքախմբերի գծով արտահանումը, իսկ Գծապատկեր 4-ից երևում է դրանց ծավալների աճը 2022 թվականին:

Կարող ենք ենթադրել, որ եթե ապրանքախմբի արտահանման ծավալը գերազանցում է տվյալ տարում դրա արտադրության ծավալին, ապա, ամենայն

[10] Աղբյուրը՝ ՊԵԿ և ՎԿ տվյալներ:

հավանականությամբ, առնվազն դրանց տարբերության չափով առկա է տվյալ ապրանքախմբի գծով վերարտահանում: Հետևաբար, վերարտահանման չափը գնահատելու համար անհրաժեշտ կլինի արտահանման ծավալների փոփոխությունը համեմատել համապատասխան արտադրության ծավալների փոփոխության հետ: Այդ նպատակով կատարվել է ՀՀ 2022թ. արդյունաբերության և արտահանման ծավալների համեմատական վերլուծություն (Աղյուսակ 2): ԱՏԳ ԱԱ և ՏԳՏԴ մակարդակների միջև անցումային բանալիների[11] օգտագործման հիման վրա ապրանքների արտահանման քառանիշ դասակարգումը վերափոխվել է տնտեսական գործունեության դասակարգման, ինչը թույլ է տվել համադրել արտադրության և արտահանման ծավալները (համեմատությունը հնարավոր դարձնելու նպատակով արտադրության ծավալները ներկայացվել են դոլարային արտահայտությամբ՝ հիմք ընդունելով 1 ԱՄՆ դոլար=435.7 դրամ միջին տարեկան փոխարժեքը):

Աղյուսակ 2. Արդյունաբերական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների համեմատությունը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների, մլն ԱՄՆ դոլար

ՏԳՏԴ դասակ	Տնտեսական գործունեության անվանումը	2021թ.			2022թ.		
		Արտադրություն	Արտահանում	Տարբերություն	Արտադրություն	Արտահանում	Տարբերություն
8	Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	38.9	122.6	-83.7	71.2	449.6	-378.4
13	Մանածագործական արտադրատեսակների արտադրություն	5.3	7.6	-2.2	6.8	28.1	-21.3
14	Հագուստի արտադրություն	83.4	182.4	-99.0	102.3	206.0	-103.7
20	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	24.9	25.8	-0.8	40.5	76.1	-35.6
24	Հիմնային մետաղների արտադրություն	*27.5*	*479.1*	*-451.6*	*441.5*	*857.9*	*-416.4*
26	Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	48.2	50.2	-1.9	23.2	654.2	-631.0
27	Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	20.5	12.2	8.3	50.1	87.4	-37.3
28	Մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	0.0	45.1	-45.1	41.9	119.2	-77.3
29	Ավտոմեքենաների արտադրություն	0.0	17.6	-17.6	0.0	282.8	-282.8
32	Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	37.3	80.6	-43.3	96.4	140.9	-44.5
Ընդամենը		**286.1**	**1023.1**	**-**	**873.9**	**2,902.3**	**-**

[11] https://armstat.am/am/?nid=844, այցելվել է 27.07.2023թ.:

Աղյուսակ 2-ում բերված տվյալներից երևում է, որ 2022 թվականին առկա են մի շարք գործունեության ոլորտներ, որոնցում արտադրված ապրանքների ծավալներն էապես զիջում են արտահանման ծավալներին: Էական շեղումներ կան «համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն», «հիմնային մետաղների արտադրություն», «ավտոմեքենաների արտադրություն» և այլ ճյուղերում: Ընդ որում, աղյուսակում ներկայացված են նաև 2021թ. տվյալները, որոնցից կարելի է նկատել, որ արտահանման՝ արդյունաբերության ծավալները գերազանցող մասը հիմնականում չի բացատրվում 2021թ. արտադրության ծավալներով (այսինքն՝ 2022թ. արտահանված ապրանքները չէին կարող արտադրված լինել 2021 թվականին): Հետևաբար, այդ տարբերությունները կարող են բացատրվել միայն վերարտահանման երևույթի առկայությամբ:

Որպեսզի հնարավոր լինի հաշվարկել ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՀՀ-ից վերարտահանման ծավալները, կարելի է դիտարկել արտահանման ծավալների աճերը 2022թ. այն ճյուղերում, որոնցում դրանք գերազանցել են արդյունաբերության արտադրանքի ծավալներին (և որոնք չեն բացատրվում 2021թ. արտադրության ծավալներով): Մասնավորապես, եթե հաշվարկենք Աղյուսակ 2-ում ներառված գործունեության տեսակների արտահանման ծավալների աճը, ապա կստացվի շուրջ 1.88 մլրդ ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ այդ նույն ոլորտներում արտադրության ծավալների աճը կազմել է շուրջ 587.8 մլն ԱՄՆ դոլար: **Ստացվում է, որ առնվազն դրանց տարբերության չափով՝ շուրջ 1.3 մլրդ ԱՄՆ դոլարի չափով տեղի է ունեցել վերարտահանում**:

Եթե գնահատված վերարտահանման ծավալը նվազեցնենք 2022թ. ընդհանուր արտահանման ցուցանիշից և համեմատենք ստացվածը 2021թ. ցուցանիշի հետ, ապա կստացվի արտահանման աճի տեմպը շուրջ 2 անգամ ավելի ցածր է եղել՝ կազմելով 36.9%:

ՀՀ ֆինանսների նախարարը ևս ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի 12.06.2023թ. արտահերթ նիստում[12], ներկայացնելով 2022 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունը, հաստատեց, որ դեպի ՌԴ արտահանման շուրջ 187%-ով աճին զգալի է եղել վերարտահանման նպաստումը: Մասնավորապես, նա նշեց, որ այս աճին հայկական ծագման ապրանքների արտահանման նպաստումը կազմել է շուրջ 47 տոկոսային կետ (շուրջ 395.1 մլն ԱՄՆ դոլար *[840.7 (2021թ. դեպի ՌԴ արտահանման ծավալը) x 0.47 ≈ 395.1]*): Այսինքն՝ նախարարի խոսքերից ստացվում է, որ 2022թ. դեպի ՌԴ արտահանման 1,570.3 մլն ԱՄՆ դոլարով աճի

[12] https://www.youtube.com/watch?v=9chQJeEcQiA, այցելվել է 27.07.2023թ.:

մնացած մասը՝ շուրջ 1,175.2 մլն ԱՄՆ դոլար *[1,570.3-395.1=1,175.2]*, կազմել է վերարտահանումը, որը բավական մոտ է մեր ստացած գնահատականին՝ պարունակելով միայն դեպի ՌԴ վերարտահանումը:

Այնուամենայնիվ, հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ վերարտահանման երևույթը միայն ռուս-ուկրաինական հակամարտությամբ չէ պայմանավորված. այն նախորդ տարիներին ևս առկա է եղել: Այդ իսկ պատճառով կարևոր է մոտավոր գնահատել վերարտահանման ընդհանուր ծավալում ռուս-ուկրաինական հակամարտության շոկային գործոնի հետևանքով արձանագրված աճը: Այդ նպատակով, համեմատվել են 2022թ. արտահանմանը ամենաշատ նպաստում ունեցող ապրանքախմբերից երեքի արտահանման և արտադրության ծավալները 2019-2021 թվականներին:

Աղյուսակ 3. 2022թ. վերարտահանման մեջ ամենամեծ կշիռն ունեցող ապրանքախմբերի արտահանման և արտադրության ծավալները 2019-2021թթ. (ըստ տնտեսական գործունեության տեսակների, մլն ԱՄՆ դոլար) [13]

ԱՊՐԱՆՔԱ-ԽՈՒՄԲ	2019			2020			2021		
	Արտա-հանում	Արտա-դրություն	Տարբե-րությունը	Արտա-հանում	Արտա-դրություն	Տարբերու-թյունը	Արտա-հանում	Արտա-դրություն	Տարբերու-թյունը
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	*414.6*	*368.0*	***46.6***	*368.4*	*386.2*	***-17.8***	*326.3*	*291.6*	***34.8***
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	*44.3*	*71.3*	***-27.0***	*41.5*	*78.6*	***-37.1***	*56.7*	*89.8*	***-33.1***
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	*31.7*	*0.5*	***31.2***	*8.4*	*0.2*	***8.2***	*38.7*	*0.0*	***38.7***
ԸՆԴԱՄԵՆԸ	***490.6***	***439.8***	***50.8***	***418.3***	***465.0***	***-46.7***	***421.8***	***381.4***	***40.4***
Վերարտահանման ծավալի մոտավոր գնահատականը			**77.8**			**8.2**			**73.4**

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ հիշյալ ապրանքախմբերի վերարտահանման ծավալները՝ նախքան ռուս-ուկրաինական հակամարտությունը չեն գերազանցել տարեկան 80 մլն ԱՄՆ դոլարը: **Ուստի կարելի է ասել, որ 2022**

[13] Աղբյուրը՝ ՎԿ տվյալներ:
Դոլարային արտահայտությամբ ներկայացվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ԱՄՆ դոլարի հետևյալ միջին տարեկան փոխարժեքները՝ 2019թ.՝ 480.5, 2020թ.՝ 489.0 և 2021թ.՝ 503.8 դրամ:

թվականի վերարտահանման մեջ ռուս-ուկրաինական հակամարտության հետ կապ չունեցող գործոնների դերն աննշան է:

Մեծ ծավալներով վերարտահանման առկայության մասին ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ չնայած արտահանման աճին, **ՀՀ ՀՆԱ-ում շարունակաբար աճում է տնտեսության «ոչ արտահանելի» և նվազում «արտահանելի» հատվածների տեսակարար կշիռը**[14]**:**

Որպեսզի արտահանման աճի գործոնների վերաբերյալ վերլուծությունն առավել ամբողջական լինի, փորձենք դիտարկել այլ հնարավոր գործոնների առկայությունը և դրանց դերը: Ընդհանրապես, արտահանման աճի հանգեցնող գործոնների շարքում հայտնի են հետևյալները՝ գործընկեր երկրում բնակչության կենսամակարդակի աճը, ազգային արժույթի արժեզրկումը, տնտեսության «արտահանելի» հատվածի արտադրության ծավալների աննախադեպ աճը, տրանսպորտային-լոգիստիկ իրավիճակի էական բարելավումը, արտահանման հետ կապված ծախսերի (տրանսպորտային, մաքսային, ապահովագրական և այլն) նվազումը, երկրի ներսում արտահանման համար էական նպաստավոր պայմանների ստեղծումը (ներդրումային դաշտի բարելավում, արտահանման սուբսիդավորում, դեպի արտահանումը կողմնորոշված արտադրության պետական հովանավորություն և այլն), արտահանվող հումքի վերամշակման համար երկրի ներսում նպաստավոր պայմանների ստեղծումը, ինչը հնարավորություն կտա հումքի փոխարեն արտահանել արդեն որոշակի վերամշակում անցած և, հետևաբար, ավելի մեծ ավելացված արժեքով ապրանքներ և կիսապատրաստուկներ) և այլն:

Դիտարկենք 2022թ. ՀՀ տնտեսությունում այդ գործոնների առկայությունը: Մասնավորապես.

- Միանշանակ է, որ արտաքին առևտրի առումով Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում բնակչության կենսամակարդակը 2022-ի ընթացքում մեղմ ասած՝ չի աճել: Ավելին, առաջին գործընկեր երկիր հանդիսացող ՌԴ-ում ռուբլու՝ տարվա ընթացքում արձանագրված էական արժեզրկումը զգալի բացասական ազդեցություն է ունեցել ներմուծման (այդ թվում՝ նաև ՀՀ-ից) առումով այդ երկրի բնակչության գնողունակության վրա:
- ՀՀ դրամը 2022-ի ընթացքում ոչ միայն չի արժեզրկվել, այլ ընդհակառակը՝ էապես արժևորվել է բոլոր գործընկեր երկրների արժույթների նկատմամբ (ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 5.5%-ով, եվրոյի նկատմամբ՝ 29.4%-ով, ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 15.6%-ով):

[14] «Լույս» հիմնադրամի «ՀՀ տնտեսական աճի կառուցվածքի վերլուծություն (հեռանկարային զարգացման համատեքստում)» հրապարակում՝ https://www.luys.am/....pdf, այցելվել է 27.07.2023թ.:

• Տնտեսության «արտահանելի» հատվածի արտադրության ծավալների աննախադեպ աճի մասին նույնպես հնարավոր չէ խոսել: Մասնավորապես, 2022 թվականին ՀՀ հիմնական «արտահանելի» ոլորտներ հանդիսացող արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում գրանցվել է արձանագրված 12.6% տնտեսական աճից էապես ցածր աճ՝ համապատասխանաբար՝ 7.9% և 1.6%:

• Տրանսպորտային-լոգիստիկ իրավիճակի բարելավում նույնպես չի արձանագրվել: Ընդհակառակը, կորոնավիրուսային համավարակի պատճառով այն էապես բարդացել էր, իսկ Ուկրաինայում ռազմական գործողությունների սկսվելուց հետո առանց այն էլ ոչ բարենպաստ իրավիճակն առավել վատթարացավ (հետագայում, իհարկե, այն որոշ չափով բարելավվեց, սակայն, անկասկած, մնում է ավելի անբարենպաստ, քան նախքան ռազմական գործողությունների սկիզբը): Որպես հետևանք՝ աճել են նաև արտաքին առևտրի հետ կապված տրանսպորտային ծախսերը:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ թվարկված գործոնների առնվազն հիմնական մասն անցած մեկ-երկու տարում, միանշանակ, առկա չի եղել, և, հետևաբար, **2022 թվականին արտահանման ծավալների աննախադեպ աճը հիմնականում կարող է բացատրվել նպաստող շոկային գործոնների (մասնավորապես՝ ռուս-ուկրաինական հակամարտության հետևանք հանդիսացող) առկայությամբ:**

ՀՆԱ-ն ծախսային եղանակով դիտարկելու դեպքում կարելի է հաշվել 2022 թվականի տնտեսական աճին արտահանման աճի նպաստումը: Աղյուսակ 4-ում ներկայացված է ծախսային եղանակով ՀՆԱ-ի կառուցվածքը 2021 թվականին և ՀՆԱ ծախսային բաղադրիչների տոկոսային փոփոխություններն ու տնտեսական աճին նպաստումները 2022 թվականին:

Աղյուսակ 4. ՀՆԱ-ի՝ ծախսային եղանակով կառուցվածքը 2021 թվականին և ՀՆԱ բաղադրիչների տոկոսային փոփոխություններն ու տնտեսական աճին նպաստումները 2022 թվականին[15]

ՑՈՒՑԱՆԻՇ	ՀՆԱ-ի կառուցվածքը 2021թ. %	Ծավալի ինդեքսը 2022թ. %	Նպաստումը 2022թ. տնտ. աճին, *տոկոսային կետ*
ՀՆԱ	**100.0**	**12.6**	**12.6**
Վերջնական սպառման ծախսեր	*84.9*	*7.9*	*6.7*
Համախառն կուտակում	*23.0*	*8.0*	*1.8*
Արտահանում	*35.9*	*53.8*	*19.3*
Ներմուծում	*-43.8*	*34.7*	*-15.2*

Արտահանման աճի՝ պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա հաշվարկված նպաստումը 2022 թվականի տնտեսական աճին կազմում է 19.3, իսկ ներմուծման աճինը՝ -15.2 տոկոսային կետ: Նկատի ունենալով, որ, վերարտահանումը 2022թ. մոտավոր գնահատականներով կազմել է արտահանման ընդհանուր ծավալի առնվազն 24.8%-ը *[1,291.4 մլն ԱՄՆ դոլար / 5,419.1 մլն ԱՄՆ դոլար x 100% ≈ 24.8%]*, իսկ ներմուծման 14.7%-ը *[1,291.4 մլն ԱՄՆ դոլար / 8,775.9 մլն ԱՄՆ դոլար x 100% ≈ 14.7%]*, գալիս ենք այն եզրահանգմանը, որ **2022-ի 12.6% տնտեսական աճից շուրջ 2.6 տոկոսային կետն ուղղակիորեն ապահովվել է վերարտահանման հաշվին** *[0.248x19.3 - 0.147x15.2 ≈ 2.6]*:

Հարկ է նշել, որ վերարտահանումը տնտեսական աճի վրա, բացի ուղղակի ազդեցությունից, ունի նաև անուղղակի ազդեցություն (բազմաթիվ տնտեսական սուբյեկտների տնտեսական ակտիվության աճ, վերարտահանման գործընթացներում ընդգրկված տնտեսական սուբյեկտների տնօրինվող եկամուտների աճ, որը հանգեցնում է նրանց սպառման մուլտիպլիկատիվ աճի, այդ գործընթացներում ընդգրկված տնտեսավարողների կողմից ներդրումային ծախսերի աճ, բյուջետային մուտքերի աճ, որը կնպաստի պետական ծախսերի աճին և այլն): Սույն հետազոտությունում տնտեսական աճի վրա նման անուղղակի ազդեցությունը չի գնահատվել:

[15] Աղբյուրը՝ ՎԿ տվյալներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ տնտեսության արտահանման կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է արտածին գործոնների ազդեցությամբ և պարունակում է էական ռիսկեր:

2022 թվականին ՀՀ տնտեսության արտահանման կազմում որոշ ապրանքախմբերի գծով նշանակալի աճ է արձանագրվել թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կառուցվածքում: Արտահանման ծավալների զգալի աճ գրանցած ապրանքների մի մասի արտադրությունը Հայաստանում ընդհանրապես բացակայում է, իսկ որոշների արտադրության ծավալները էապես զիջում են դրանց արտահանման ծավալներին:

Այս հանգամանքները, ըստ էության, հիմք են տալիս եզրահանգելու, որ 2022-ի արտահանման կազմում զգալի մաս է կազմել վերարտահանումը: Ընդ որում, վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ 2022 թվականին վերարտահանումն առավելապես պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքներով, մասնավորապես՝ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներով:

2022թ. ՀՀ տնտեսության արտահանման առնվազն 24.8%-ը (շուրջ 1.3 մլրդ ԱՄՆ դոլար) կազմում է վերարտահանումը, առանց որի արտահանման աճի տեմպը ավելի քան 2 անգամ ավելի ցածր կլիներ: Ավելին, վերարտահանումը էական նպաստում է ունեցել նաև տնտեսական աճին՝ ապահովելով 12.6% տնտեսական աճի շուրջ 2.6 տոկոսային կետը:

Ընդ որում՝ 2022 թվականին կտրուկ աճել է արտահանման առումով առաջատար առևտրային գործընկեր ՌԴ արտահանման տեսակարար կշիռը՝ ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման արդյունքում, ինչը, բնականաբար, հանգեցրել է արտահանման դիվերսիֆիկացիայի նվազման՝ ավելացնելով ՌԴ շուկայից հայաստանյան արտահանողների կախվածության ռիսկերը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*